


Urb. 94/6

Ա. ՍՅՆՑԿԻ

342

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԳՁՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1935





891-70(09)Ա. ՍՏՆՆԵՐ

Ս-28

600
104

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ,
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴՐՈՇԻ ՏԱԿ

Հասկերդային գրողների միությունում
առաջին համագումարում (արհմիություններ)

A
19135

ԽՍՀՄ
ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԳՐԵԴԱՍԱՆ

ՍԿՐԻՍՆԱԿ

ԳՆՏԱԳԱՆ ԼՐԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ
ՍՐԵՐԳՈՆ 1935

Սորհրդային գրողների համագումարն անցնում և բացառիկ հաջողութեամբ և շքապատված և մեր յերկրի մեծ ուշադրութեամբ:

Դեռ մի քանի ամիս առաջ կային մարդիկ, վորոնք տարակուսում էին թե պե՞տք և արդյոք դամարել այս արտասովոր համագումարը, մի բան դուրս կգա՞ր արդյոք դրանից: Նույն իսկ համագումարի նախորդակին աչքավախ խոսակցություններ էին լինում:

Բայց ահա համագումարը բացվեց: Համագումարը շարժվեց: Նա հսկայական թափ առավ: Այժմ արդեն այդ համագումարի 13-րդ որն և, այն ինչ վաղ մեր հարգելի նախադասը, վաղ նախադահության Ֆլեգմա-

տիկ անդամ Դեմյան Բեդնին և վուչ Ել
Հոգսերով ասքված Բորիս Պասանը-
նակը, Վոչ վոք չգիտե, թե ինչպես
կանգնեցնի այժմ այդ Համագումար-
քը, — աչնքան բաղմաթիվ ստեղծադար-
ծական հարցեր արծարծեց նա, աչն-
քան ստեղծադարծական յեռանդ դար-
պացրեց նա իր ընթացքում :

Համագումարը, անտարակույս,
Հակաչական յերևույթ կհանդիսա-
նա և հանդիսանում և այժմ մեր դրա-
կանության մեջ : Բոլորն Ել, և մանա-
վանդ գրողները, զգում են, Վոք Հա-
մագումարից հետո դրականությունն
այլ բան կդառնա, վոք նա կբարձրա-
նա նոր ստատիճանի : Յեվ դրականու-
թյան ստադա պատմաբանը դրական
տարեդրությունը հաչվել կմկսի, ի-
հարկե այսպես, մինչև խորհրդային
գրողների առաջին Համագումարը
և նրանից սկսած :

Ընկերներ, այս Համագումարում
զանովում են Խորհրդային Միության
բոլոր ժողովուրդների գրողները :
Այստեղ հավաքվել են Միության ժո-
ղովուրդների ամենախրուկյալ ին-
տելիգենցիայի ներկայացուցիչները :

Երանք աշտակ են յեկել իրենց հա-
 դող բարբ հարցերով: Արդարեւ, հա-
 մադուճարում ե՛ Սյեքսեյ Մաքսիմո-
 վիչի զեկուցման մեջ, ե՛ Սորհրդային
 Միութեան ստանձին հանրապետու-
 թյուններէ ներկայացուցիչներէ զե-
 կուցումներում, ցայտուն կերպով
 պատկերվեց այն ամբողջ ամենահա-
 բուստ փարձը, կուլտուրական այն
 ամբողջ ժառանգութեանը, վորը դո-
 յութեան ունի մեր հանրապետու-
 թյուններում: Համադումարն ակնա-
 սու կերպով ցույց տվեց, վոր մեր
 չեղբայրական բնտանիքում ապրում
 են այնպիսի ժողովուրդներ, վորոնք
 իրենց կուլտուրան հաշվում են դա-
 բերով ու հաղարամյակներով:
 Մենք, անտարակույս, սվելի հարս-
 տացած դուրս կղանք այս համադու-
 մարից:

Արդեն համադումարից սուաջ մեծ
 աշխատանք եր կանարվել Սորհրդա-
 յին Միութեան ժողովուրդներէ դրա-
 կանութեանը ծանոթանալու ուղղու-
 թյամբ: Սակայն, համադումարում
 մեր լսածի հիման վրա կարելի չե ա-
 սել, վոր մենք միայն նկիտքն ենք

ապրում այն մեծ աշխատանքի, վորի
 նպատակն և Յորհրդային Միութեան
 ժողովուրդներէ գրողների վտա-
 դարձ ծանոթացումն ու մերձեցումը,
 գրողների ծանոթացումը խորհրդային
 յերկրի ժողովուրդների բացմակող-
 մանի հարուստ այն կուլտուրային,
 վորի մասին լայն ու պարզորոշ դադա
 վար և տայիս Յորհրդային Միու-
 թեան գրողների առաջին համադու-
 մարը:

Այստեղ հանդես յեկան Յորհրդա-
 յին Միութեան զանազան ժողովուրդ-
 ների ներկայացուցիչները, գրական
 զանազան հոսանքների ներկայացու-
 ցիչները: Նրանք բոլորն ևլ իրենց ձև
 մով և իրենց գրականութեան համե-
 ծատ ելին քնում տեղծարարական
 հարցերը: Սակայն նրանց բոլորին ևլ
 միացնում ևր մի բան, նրանց բոլոր
 յելույթները պատում ելին այն բանի
 շուրջը, վորի համար պայքար և
 մղում մեր յերկիրը՝ սոցիալիզմի
 դարձի շուրջը:

Մենք կարող ենք լիակատար իրա-
 վունքով ասել, վոր այս համադումա-
 րը, վորտեղ հախաքվել են Յորհրդա-

յին Միութեան ժողովուրդներն ինտելիգենցիայի լայնադուռն մասի ներկայացուցիչները, բայց իր գրական նշանակութեանից, ունի նաև քաղաքական խոշոր նշանակութեան, վորովհետև այդ համադումարը ձևակերպում ու ամրացնում է արդեն վաղուց սկսված մի պրոցես՝ Խորհ. Միութեան ժողովուրդների ինտելիգենցիայի միացումը խորհուրդների դրոշի տակ, սոցիալիզմի դրոշի տակ (ծափեր) :

ՄԵՐ ԳԻՇԸ, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ԳԻՇՆ Ե

Համադումարում տեղի ունեցավ ստեղծագործական աշխույժ դիսկուսիա : Այստեղ շոշափվեցին գրական ստեղծագործութեան բոլոր հարցերը : Այդ է հիմնական տարբերութեանն այն ժամանակներից, յերբ գրական շարժմանն ուղղութեան էր տալիս Ռ.Ա.Պ.Պ-ը : Դուք հիշում եք, վոր Ռ.Ա.Պ.Պ-ն ուներ իր «հիմնական գիծը», իր «դիսկուսիոն քարտուղարը», իր «հիմնական պլատֆորմը», վոր փորձում է յին վաթաթեյ բոլոր դրոշներն վր-

դին: Դուք հիշում եք նաև այն կա-
տաղի վեճերը, վորոնք առեղի ելին
ունենում այդ պլատֆորմի ամեն
ճի կետի, ամեն ճի ստորակետի շուր
ջը:

Համկամկուսի կենտրոնի ապրիլի
23-ի (1932 թ.) վարչումը շարական-
գեղարվեստական կազմակերպու-
թյունների վերակառուցման մասին՝,
վերջ դրեց ՌԱՊՊ-ի գրայության, վորը
վերածվել էր խորհրդային գրակա-
նության հեռավա դարգայման սրու-
յակի, հիմք դրեց Սորհրդային Գրագ-
ների Միության և բերեց այն քաղա-
քական ու սակզձագործական վերել-
քին, վորի վայլուն ապացույցն է
խորհրդային գրողների համագու-
մարը:

Սորհրդային գրողների տաղին հա-
մագումարում տեղի չե ունենում
սակզձագործական ազատ դիտու-
սիա, աղասորեն քննարկվում են
սակզձագործական բոլոր հարցերը:
Այս համագումարում, սակզձագոր-
ծական հարցերի շուրջը չի առաջարկ
վում վոչ մի բանաձևով, վոր պարտա-

դիր լինելը յուրաքանչյուր դրողի համար :

Յերբ քննարկելում եր համազումարի աշխատանքի ծրագիրը և ղեկուցողներ և յին ստաջարկելում այս համազումարի համար հարկաւ կադմիսմիտեն համազումարի այդ ծրագիրը և ղեկուցողներին համաձայնեցնում եր մեր կուսակցութեան հետ : Յես կարծում եմ , վոր այդ գաղանիք չի վոչ վորի համար : Սակայն դա բնավ չի նշանակում , վոր ամեն մի ղեկուցում , վորպէս կանան , ինչ վոր սլատ Ֆորմ և , վորակը վո՛չ մի ստորակէտ , վո՛չ մի խոսք , վո՛չ մի փոփոխութեան յենթակա չի և պարտադիր և նրա անչեղ կատարումը : Այդպէս չե , ընկերներ : Դա կլինել սեղմել ստեղծադործական նախաձեռնութեան :

Մեզ մտա չկան կուսակցութեան ու կատարութեան աշխարհի վորոշումներ , վոր պաշտոնական բնութեւորումներ և գնահատումներ տրվեն ասանձին գրողներին , վոր պրոպագանդներին և բանաստեղծներին տրվին գո

նազան աստիճանի ինչ վոր պատ-
 վանչաններ, շքանչաններ, խրախուս-
 ման նշաններ կամ պախարակման
 ու պարսալանքի նշաններ: Ինձ հայտ
 նի չե նաև կուսակցության ու կա-
 ոտախարության վոչ մի վորոշում՝ Մա-
 յակովակուն զարացնելու՝ մասին:
 Մայակովակին հոբր բանաստեղծ և,
 հեղատիտության լրանաստեղծ, սա-
 կայն մենք վորոշում շունենք, վոր
 մեր ամբողջ խորհրդային պոեզիան
 հավասարենք միմիայն Մայակովա-
 կուն: Յե՛վ, յե՛թի, բնկեր Բուխարին
 իր զեկուցման մեջ դնահատական ար-
 վեց բանաստեղծների առանձին յեր-
 կերին և ստեղծագործությանը, ա-
 պա այդ բանը նա արեց դարձյալ
 համադումարում ստեղծագործական
 հարցեր արծարծելու կարգով: Այդ
 ամենեին չի նշանակում, վոր այս
 համադումարում ամեն մի բանաս-
 տեղծ ստացալ կուսակցությունից
 կամ կատախարությունից իր պատվա-
 նշանը, վորով պեսք և հեռանա այս
 համադումարից: Դա կլիներ բյուրոկ-
 րատիզմի մեծագույն արտահայտու-
 թյունը, իսկ դուք դիտեք, վոր չկա

այլեւի անհրաժեշտ պայքարող բյու-
րակրատիպի դեմ, քան մեր կուտակ-
ցութեանը :

Մենք ունենք հասարակական կար-
ծիք, բնօտարարութիւն, բնօտարարու-
նք, վարակ անել են վերջին տարի-
ներին և վարակի իրենք շատ լավ են
հասկանում, բե վնճար յերկու և արժե
հավոր ու արժանի գովասանիք և վար
յերկը՝ արժանի յե պախարակման :

Ստեղծել յեթե մեզ մտա, դրականու-
թեան մեջ, տեղի յե ունենում ազատ
ստեղծագործական մրցութեան և բա-
ստեղծագործական հարցերի ազատ
քննարկում, ապա այդ բնավ չի նը-
շանակում, թե մեզ մտա վնճարի գիծ
չիա դրականութեան մեջ : Վնճար, ըն-
կերներ, մենք ունենք վարձար գիծ մեր
դրականութեան մեջ և դրա մասին
խոսակց համազումարի համարյա բո-
լոր յելույթներում : Դրա մասին խոս-
ակց նաև Ալեքսեյ Մաքսիմովիչի գե-
կուցման մեջ և կենսական քարտու-
ղար ընկ. ժողանովի յելույթում : Մեր
գիծը—դա սոցիալիստական ռեակցիոն
և (ծախեր) :

Դուք ինքներդ, ձեր բանաձևում,

ասացիք, վոր ուղում եք ստեղծել
սոցխալիզմի վորով համակված յեր-
կեր: Դա յե իտրհրդային դրականու-
թյան դիծը: Իսկ բալթր մնացածում,
աստա ստեղծագործական մրցու-
թյան:

Մեզ մաս չափից դուրս խմատա-
կություններ են անում սոցխալիստա-
կան ռեալիզմի շուրջը: Սոցխալիստա-
կան ռեալիզմը բնավ ինչ վոր գործիք
ների համաքածու չե, վոր արվի զը-
րողներին՝ գեղարվեստական յերկեր
ստեղծելու համար: Մի քանի դրողներ
սլահանջում են, վոր նրանց արվի սո-
ցխալիստական ռեալիզմի տեսությու-
նը բալթր մանրամասնություններով:

Դուք ինտելիգենցիայի լավագույն
մասի ներկայացուցիչներն եք: Ձեզ
չատ ե արվել, նրանից շատ ել կպա-
հանջվի: Յերբ ասում են, թե մեզ
պետք ե ցույց տալ սոցխալիստական
ռեալիզմը, ասրա այստեղ, դրողների
համազումարում, կարող ե լինել մի
այն մի սլատասխան՝ սոցխալիստա-
կան ռեալիզմն ամենից լավ կարող ե
ցույց արվել գեղարվեստական այն

յերկերում, վորոնք ստեղծում են
խորհրդային գրողները :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԸ ԵՐՁԱՊԱՏՎԱԾ
ԵՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՍԻՐՈՎ, ՅԵՎ, ՀՈԳԱՏԱ
ԲՈՒԹՅԱՄԲ

Խորհրդային գրողներին համադրումա
րի բնորոշ դիժն այն լարված ուշա-
դրութիւնն է, վորով շրջապատել է
համադրումարը մեր ամբողջ յերկիրը :
Քիչ չխտավեց այն հարցի մասին, վոր
Խորհուրդներին յերկրում վոչնչացվել
են այն անջրպետները, վորոնք անցյա
լում գեղարվեստագետին անջատում
էին ժողովրդից : Մակայն յես կար-
ծում եմ, վոր գրողներից շատերն
այդ բանն իր ամբողջ ուժով առաջին
անգամ զգացին այստեղ, խորհրդա-
յին գրողներին համադրումարում : Զե-
ղանից շատերը միայն այստեղ
զգացին, թե օ ինչպիսի սի-
րով, ինչպիսի ուշադրությամբ է
շրջապատում մեր ժողովուրդն ի՞նչ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻՆ,
ինչպիսի հոգատարությամբ է վերա-
բերվում նրան : Դուք տեսնում եք,

Թե ինչպես ամբողջ յերկիրը հասե-
լում և համադումարի աշխատանքին,
Թե ինչպես զգայուն կերպով արձա-
դանքում և նա զբողիների ամեն մի յե-
լաւյթին: Այդ ցայտուն կերպով ցու-
ցաղովեց այտեղ, համադումարում,
բանվորների ու կոլտնտեսականների
բաղմաթխվ սաստիկրակությունների,
կարմիր բանակի, նախատորմի, յերկ-
տասարդության և արվեստի մյուս
ճյուղերում աշխատողների ներկայա-
ցուցիչներին յելաւյթներում:

Այդ տեսանք մենք Մոսկվայի կուլ-
տուրայի և հանգստի սլարկում, կա-
նաչ թատրանում, վորտեղ հալաքվել է
էյին Մոսկվայի մի քանի տասնյակ
հաղար պրոլետարները՝ ջերմադին
վողջունելու խորհրդային գրողների
համադումարը: Յեթք գրողների այդ
հանդեսին ներկիս դոնվողները տեսան
տասնյակ հաղարավոր հանդիսատես-
ներ, այդ հսկայական ամփիթատրանը
բաց յերկնքի տակ, այն լուսինը, վոր
կախված էր այդ ամփիթատրոնի վե-
րեվը (ընդվորում գրողները հարց ե-
յին տալիս՝ «Միթե՞ այդ լուսինն ևս
կախ է տվել պարկի դիրեկտորը»), ու

A 19135

600

2472

1884

պա նրանցից շատերի յերեւակայութեան մեջ վերակենդանացան անտիկ շունատանի անմոռանալի պատկերները, վարտեղ արվեստն անխղելիտրեն կապված եր ժողովրդի հետ :

— Լավ կլիներ, վոր այս բնութւ բնադրվեր «Լիդիալը», դուրս սլըր-ծալ այն ժամանակ Ա. Տըլատոյի բերանից : — Կամ կազմակերպել բանաստեղծների ու յերգիչների մրցություն, — ավելացրեց մեկը :

Արդյոք չե՞ք կարծում, ընկերներ, վոր այժմ, պատմական դարձագաման մի այլ աստիճանում, ելնելորականութեան ու ռազիոյի դարում, մեր յերկրում հաստատված օպիալիզմի ու խորհրդային իշխանութեան դարում, մենք հասել ենք արվեստի լաւագույն ժամանակներին, յերբ ժողովուրդն ու գեղարվեստագետը կազմում են մի ամբողջություն : Մեզ մոտ հետզհետե սնհետանում են գրական այն ճամարտակները, վորոնք ընդունարաններում, սիւնդ փակելով դռները, իրար իւրացնում են ճոռոմ տիրադներով : Մեզ մոտ ժողովուրդը ճանաչում է իր գրողներին, նա գոր-



ծարաններում, կոլտնտեսություններում,
բում, տներում, ախումբներում և
կարմիր բանակում քննարկում և ա-
մեն մի նոր ստեղծագործություն:
Մեզ մոտ ամեն մի լավ յերկ վայրկե-
նարար տարածվում և ամբողջ յերկ-
բում՝ Բելոռուսիայից մինչև Պաղատ
ուխիկանոսի սպիերը:

Զուր չե վար աշատեղ, համարումա
բում, Ա. Մ. ԳՈՐԿՅՈՒ գեկուցման
մեջ, գրողներին յելույթներում աչն-
քան շատ խոսվեց ժողովրդական բա-
ստեղծագործություն մասին: Այո, մեր
ժողովուրդը նորից հրապարակ և հա-
նում իր յերդիչներին և իր նկարիչ-
ներին: Ամեն տարի բարձրանում են
նարանտր ուժեր, նոր գրողներ, վո-
րոնք դուրս են գալիս բանվորների ու
կոլտնտեսականների միջից, վորոնք
յերբեմն իրենց առաջին ստեղծագոր-
ծություններով հայանի յեն գտնում
ամբողջ յերկրին:

Այսօր ՍՏԱՎՍԿԻՆ պատմում եր
աչգ յերխոսասարդ գրողներին մասին,
վորոնց թիվը տարեց-տարի ախելա-
նում և, վորովհետև աճում և մեր
կուլտուրան:

Մյուս կողմից, այն՝ դեղարվեստա-
դեաները, մորոնք սուաջ մեկուսացած
էյին, այժմ դարձով պրոչեարիատի
մաս և բնդունելով խորհրդային իշ-
խանության պլատֆորմը, մերձավոր
ու հարողատ են դարձել մեր ժողո-
ւիրդի համար :

Յերբ այստեղ հանդես էյին գալիս
բանվորների ու կուրնտեսականների
նեկայացուցիչները, նրանք ասում
էյին մեզ՝ «նկարագրեցեք մեր աճու-
մը, մեր պայքարը՝ սոցիալիզմի հա-
մար» :

Ամեն մի մարդ, մորբ մողջունում
եր համայումարն այս ամբիոնից,
սկսած Մամիլայի այն կուրնտեսու-
հուց, մորբ խոսում եր հիանալի, գու-
նեղ լեզվով և մինչև Մտալինի անվան
գործարանի վարպետը, ստեղծվել են
հեղափոխության կողմից, կռվվել են
սոցիալիզմի հողթանակի համար մրդ-
վող համառ պայքերում :

Յես մերհիշում եմ մեր քննադատ-
ների մի քանի խմաստավությունե-
րը, մորոնք պտույտ են դալիս այն
մի քանի հիմնական դրույթների շուր-
ջը, մորով գեկտվարվում են մեր դը-

բողնեցը և իրենց դատադուժ յուճննե-
 րով աշխատում են բովանդակագուրի
 դարձնել այդ դրույթների խմատը :
 Հայտնի չե Ենդելսի այն դրույթը ,
 թե դեղարվեստագետը պետք և պատ-
 կերի ախպիկ բնավորութ յուճնները և
 ախպիկ հանդամանքները : Ահա , յեթե
 խասենք բանվորների , կոլտնտեսակա-
 ների ու կարմիր բանակի ներկայա-
 ցուցիչների այն բնավորութ յուճնների
 մասին , վորոնք հանդես չեկան այս-
 տեղ , այս ամբխանի վրա , ապա վոչ
 վոք այնքան ակնառու կերպով չի ար-
 դարացնում Ենդելսի այդ դրույթը ,
 ինչպես նրանք , վորովհետև այդ բնա-
 վորութ յուճններն ստեղծվել են ախա-
 նային դատակարգային այն պայքա-
 րում , վորը ծավալվել և մեծ յերկ-
 րում , այս բոլոր տարիների ընթաց-
 քում :

Վոճանք այսպես են դատում՝ թե
 Ենդելսի առաջին դրույթի հետ՝ ախ-
 պիկ բնավորութ յուճններին վերաբեր-
 յալ դրույթի հետ մենք կարող ենք
 հաշտվել : Իսկ ինչ վերաբերվում և
 ախպիկ հանդամանքներին վերաբեր-
 յալ յերկրորդ դրույթին , ապա դա ,

և իշանն ասած, անտեղի յն: Դա իմ
կարծիքով խոշորագույնն սխալ է:
Մենք չենք կարող հասկանալ, մենք
չենք կարող ցույց տալ վոչ մի բնա-
մարության, առանց ցույց տալու,
թե ինչպես և պայքարել այդ մարդը,
ինչպիսի խոչընդոտների, ինչպիսի
թշնամիների դեմ և պայքարել, ինչ-
պես և կռիվել այդ պայքարում:

Մեր սմբողջ կուսակցությունը, և
ԵԻՅԻ-Ստալինի կուսակցությունը ա-
նկեց ու կռիվեց սոցիալիզմի համար
մղվող պայքարում: Այդ պայքարում
կռիվեց և բանվոր դասակարգը: Մեր
գեղարվեստագետները պետք և զգաց
են ասան այդ բանն իրենց ստեղծա-
դործություններում: Նրանք պետք և
յերբեմն դռնեն այն փոքր, մանր գը-
նեքը, վորանք ընդդժում են այդ հիմ
նականը, մեր յերկրում բնավորու-
թյուններ յերևան բերելու ու ստեղծե-
լու ստպարիզում: *

ԶՆԼՅՈՒՍԿԻՆՅԱՆՆԵՐԸ ՀԵՐՈՍՄԱԿԱՆ ՊՐՈ.

ԼԵՏԱՐԻԱՏԻ ՊԱՏԿԵՐՆ ԵՆ

Այստեղ հանդես եր յեկել ՌՏՏԻ
ՅՈՒԼՅԵՎԻՉ ՇՄԻԴՏԸ: Նա ասաց,

ասաջին հասցեից ինչ վոր պարզ,
 բայց շատ նշանակալի մի բան, վորի
 վրա իմ կարծիքով, պետք է լուրջ ու
 շատ բություն դարձնեն մեր գրողնե-
 րը: Ոտատ Յուլյեվիչն ասաց՝ «Արկ-
 տիկայում, սառցադաշտի վրա, դժվա
 րագույն տրագիկ պայմաններում,
 մարդկանց իմեջ յերևան յեկան այն
 հատկույթյունները, վարոնք ասաջ
 գտնվում եյին նրանց մեջ քաղնված
 վիճակում, սակայն վարձնց դաստիա
 րակել եր խորհուրդների յերկիրը»:

Իմ առջև դրված է մի դերք, վո-
 րը պետք է բաժանել համազորմարի
 պատվիրակներին և վորի վրա յեռ
 կարծում եմ դուք բոլորը ել ուշա-
 դրություն կդարձնեք: Դժբախտա-
 րաբ արդ դրքի մասին վաջ վոք չխո-
 սեց համադրումարում: Այդ դերքը կոչ
 վում և ճինչպիսի փրկեցինք մենք չեւ
 յուսկինյաննային»: Խորհրդային Մի-
 ության հերոսները շատ անցին, մի-
 չեվ, վոր մեր գրողները ներշնչվեն
 և նկարագրեն նրանց քաժաղործու-
 թյաններն Արկտիկայի սառցադաշ-
 տերում: Նրանք իրենք դարձի լծվե-
 ցին և յերկու ամսում իրենք գրեցին

այդ դիրքը : Այստեղ, պարզ ու անպար-
 ճույն խոսքերով, ողաշուէներից ամեն
 մեկը՝ Լյուսիդիւսիկին, Լեւանեւսիկին,
 Արեւոյնյովը, Մուրկովը, Կամանինը,
 Վաղոսյանովը, Դորոնինը պատմում
 են իրենց կյանքը, այն բանի, թե ինչ
 պես են սովորել, ինչպես են կատա-
 րել իրենց հերոսական քաջագործու-
 թյունները :

Դա դարձանալի դիրք է : Դա կյան-
 քի մի հատված է : Դա վերջին ժամա
 նակներս լույս տեսածների մեջ ամե
 նահետաքրքրական գրքերից մեկն է :
 Նրա հրատարակումը վկայում է, վոր
 մեր ժողովուրդն ասպարեզ է հանել
 այնպիսի հերոսներ, մորանք մուշ միայն
 քաջագործություններ են կատարում,
 այլև դիտեն պատմել իրենց մասին,
 իրենց քաջագործություններն մա-
 սին : Այդ նոր յերևոյութ է մեր դրա
 կանության մեջ : Յերբ դուք աչքի
 անցկացնեք այդ ⁹ դիրքը, կանսնեք
 թե ինչ մարդիկ են նրանք : Մեկը
 ծնվել է Մասկիպայի մտա մի դյու-
 դում, մյուսը՝ Լենինգրադի մտա, յեր-
 բորդը՝ Պուտայաչում : Նրանց կյան-
 քն ուղին տարրեր է յեղել : Նրանցից

չատերն իրար չեն հանդիպել մինչև
Վանկարեմ և Ուելլեն: Սակայն այդ-
տեղ ընկնելով, նրանք ակտել են դուր-
ծել միասին, վարպես հեղափոխու-
թյան սրբապատանու ջոկատը (Ծա-
փեր):

Ով և ստեղծել նրանց: Կարդալով
այդ դիրքը, դուք կտեսնեք, վար-
պես մարդկանց ստեղծել և հեղափո-
խությունը:

Յերբ մեր ժողովուրդը մեծարում
եր չելյուսակինյաններին, նա նրանցով
մեծարում եր միջ միայն նրանց անձ-
նաւան արխությունն ու հերոսությու-
նը: Թերևիս այն դրողի մոտ, վարք
կակսի նկարագրել այդ քաջադարձու-
թյունը, նա կպատչնի, վարպես
անձնական հերոսության, անձնական
արխության այն որինակներին մեկը,
վորանց թիվը բաղական շատ և: Իս-
մեծադույն սխալ կլինեք: Վո՛չ: Այդ
մարդկանցից ամեն մեկն իր պատմու-
թյունն ունի: Ստացադաշտում կա-
տարվածը նույնպես իր պատմություն
ներն ունի: Յերբ մեր յերկիրը մեծա-
րում եր Արևոսիկայի հերոսներին, նա
տեսնում եր նրանց մեջ իր պատկերը,

ստացառչաշտում կատարվածի մեջ
 նա տեսնում եր խորհուրդների ամ-
 բողջ յերկրի պատկերը, հերոսական
 պրոլետարիատի պատկերը: Այնտեղ
 գրեթե միակու հասկում թյուն,
 մոր հատկանշում ե մեր աշխատավոր
 մասսաներին՝ գրեթե միակու—հերոսու-
 քյուն, մոր ցուցարեքեց մեր ժողո-
 վուրդը բանվոր դասակարգի ղեկավա-
 րությամբ, յերբ նա պատմության մեջ
 առաջին անգամ ճանապարհ հարթեց
 դեպի նոր սպասքան, դեպի նոր իրա-
 վակարդը, և գրեթե միակու այն մե-
 ծագույն կազմակերպվածությունը,
 առանց մորի հերոսությունը կտրված
 կլիներ հողից, հողաղուրկ կլիներ,
 առանց մորի չեյին կարող վրատարվել
 այլ բոլոր մեծ գործերը:

ՄՏԵՂԾԵՆՔ ՄԵՐ ՀՐԱՇԱԳԻՅՂ
 ԵՊՈՆԱՅԻՆ ԱՐԺԱՆԻ ՅԵՐԿԵՐ

Դա հակադասական նշանակություն
 ունի գեղարվեստագետի համար դե-
 դարվեստական ստեղծագործության
 համար: Կլասիկիներից մեկը, մորը
 վախճանվել և վաղուց, բայց մերկա-

յե՞ տվյալ համադրումարում, ասել էր, վոր աքն ուսալիցմը, վորն իր զթի տա կից դենը չի տեսնում, խելացնոր Քանասասիկայից վատ է, վորովհետեւ նա կույր է:

Ձեւյուսկին յանների սրինակը դեղար վեասադեաին ստորեցնում է, վոր չի կարելի սահմանափակել միայն լուսանկարելոյ, չի վարելի սահմանափակվել անցքերի արտաքին նկարագրումով: Գեղարվեստագետը պետք է գտնի այնպիսի գծեր, վորոնք գրանվորեն յերեւոյթների մոխադարձ կարը, վորոնք ցույց տան, թե վորտեղից է աճել մարդը, վորտեղից են առաջ յեկել այն հասկումթյունները, վորոնք հարաւորություն են տվել հերոսության հրաշքներ գործելու, կարմակերտության այնպիսի հրաշքներ, վորոնցով հիանում է սմբողջ աշխարհը:

Այստեղ շատ խոսվեց, վոր մեր արվեստը պետք է բախանդակալից լինի: Իս միանդամայն ճիշտ է: Այժմ մեզ մոտ չկան Քորմալիցմի բացահայտ պաշտպաններ: Ճիշտ է, դեռևս կան մարդիկ, վորոնք նդովում են Քորմա

լիղմը, և միշտ մնալով ժամանակ անդ
 են հասցնում մեր ջինս իրենց դրամաժան-
 րում, կամ քննադատութեան մեջ: Այդ
 սխալի դեպքեր, դժբախտաբար, դեռ
 լինում են: Մակայն բովանդակա-
 դուրի արվեստի դեմ մղվող պայքա-
 րում, այնպիսի արվեստի դեմ, վորն
 արտացոլում է բուրժուական աշխարհի
 նեխումն ու քայքայումը, մենք
 արդեն մտածական հաղթանակ ենք
 ձեռք բերել: Մեր գեղարվեստագետը
 դիտակցում է, վոր նա իր յերկերում
 պետք է տա մի թե պարզապէս մի
 գեղեցիկ սոցեակա, այլ բովանդակա-
 լից մի սակեղծարժութուն, վորը
 մտեղնչի, կոչ անի և առաջ մղի:
 Մենս կարծում են, վոր արվեստա-
 դեան այն ժամանակի, յերբ նա սակեղ-
 ծարժում է, յերբ նա սակեղծում է
 իր յերկը, յերբ նա իր ամբողջ ուժը
 լարում է, ուղում է, վոր իր սակեղ-
 ծարժութեան պատկերները, ամեն
 մի միտքը, ամեն մի դրացմունքը, ամեն
 մի խոսքը հասնի ընթերցողի սրբ
 աին: Այդ տեսակետից մեզ սրինակ է
 տալիս Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին:
 Նրա յերկերը բոլորն էլ կերտված են

աշխարհս, վոր դրանք շատ չափ և հաս-
կանում մասսայական ընթերցողը:
Այնտեղ հղիված և ամեն մի խոսք,
ամեն մի Ֆրազ, այնտեղ գուրգուրան
քով և արված ամեն մի պատկեր,
այնտեղ ամեն ինչ ուղղված և մի բա-
նի՝ վոր այդ ստեղծագործությունն
արձագանք գտնի ընթերցողի սրբ-
ասում: Հենց դրան պետք և ձյտի ամ-
ենն մի իսկական գեղարվեստագետ:

Ընկերներ, այստեղ հանդես յնկան
մեր նոր ընթերցողների շատ ներ-
կայացուցիչներ, նրանք յնկել են մեր
խորհրդային յերկրի բոլոր ծայրե-
րից: Նրանք հանդես ելին գալիս,
բարձրանում ելին այս ամբիոնը և
ստում ելին՝ զմենք սիրում ենք ձեզ,
խորհրդային գրողներիդ, մենք պատ-
վում ենք ձեզ, բայց մենք սպասում
ենք, վոր դուք նոր յերկիւր, նոր ստեղ-
ծագործություններ տաք մեզ, վորոնց
մեջ հոսի նոր գգացմունքների ու մշա-
քերի հեղեղը, մենք ուզում ենք, վոր-
դուք ստեղծեք այնպիսի յերկեր, վո-
րոնք վողեվորեն, վորոնք դեպի ա-
ռաջ կոչեն մեզ, վորոնց մեջ արտա-
ցովի մեր ամբողջ շրջացուցիչ, գու-

նեղ, բաղձապիտի հերոսական կյանքին ու աշխատանքը: Նբանք վալիս եյին աշտեղ, բարձրանում եյին խորհրդային գրողների համազումարի ամբիտնը և իրենց հույսերն ու պահանջներն եյին ուղղում խորհրդային գրողների համազումարին, ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներին:

Կարող և լինել միայն մի պատասխան՝ այո՛, մենք կատեղծենք ազատ ժողովրդի նոր արվեստը: Այո՛, մենք կատեղծենք սոցիալիզմի արվեստը (բունն ծափեր):




ԽՈՐՀՐԻԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐՈՇԸ

(Ճառ. Ուկրալիմայի Խորհրդային գրողների
Խամագոււմարում)

ԽՈՐՀՐԻԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐՈՇԸ

(Ճառ. Ռւկրայիմայի Խորհրդային գրողների
Խամագումարում)



Ընկերներ, մենք կարօխցինք
մեր անմիջական աշխատանքից
և չնայած աննպատակ յեղանակին,
Մոսկովայից թռիչք կատարեցինք այս
անգ Նրա համար, վարպետի մասնակ
ցինք մեզ համար ուրախ այս անցու-
ղարձին—ուկրայինական դրողներին
1—ին համադումարին: Այդ համադու-
մարը մեզ համար նույնպես ուրախալի
չե յինչպիս և այսպիսի ներկա յեղող բո-
լորի համար: Մոսկովայի դրողները սա-
վառնակով թռիչք կատարեցին, չնա-
յած այն բանին, վոր շատերին նա
սպասնում եր անահագճո սպրումներ,
օակացն, վարպետի իմրույն հասնեն
համադումարի բացմանը և բերեն
Միութենական կազմկոմիտեյի և սուս
դրողներին վողջույնները (ծախսա-
բուքյուհներ):

Յես պետք ե ձեզ վողջունեմ այն

կապմանի բազմաթիւնն կողմից, ուր յետ
աշխատում եմ՝ Համհոմկուսի կենսա-
կամի կողմից (բունն ծափահարու-
ք-յուրներ. ձայներ՝ կՅՅՅՅ ԸՆԱ-
ՍՏԱԼԻՆԸ, ՈՒՌԱՎ) :

Ընկերներ, յերբ մենք լսեցինք այս-
տեղ ընդարձակ գեկուցումներ ուկրա
յինական դրահանութեան մասին,
մենք նրանց մեջ պղպղեցինք վաչ այն-
քան վաղուց տեղի ունեցած պայքարի
վառողի հոտը, պայքար, վոր ուղղ-
ված էր նայելոնալիսաների գեմ,
նրանց գեմ, ուղքեր ուղում էյին դա-
մաճանել մեր հայրենիքին, դավա-
ճանել Խորհրդային Միութեանը, թրշ
համուն մտանել Խորհրդային Ռեկ-
բայինան: Այդ պայքարը տեղի ու-
նեցալ մտտիկ անցյալում մեր աչքերի
տուաջ, շատերն յեղան նրա մասնակից
ները, նրա վիհաները. նա տեղի ունե-
ցալ այստեղ և շատերը դիտեն այն
ճարդկանց, վարոնք գանվեցին բարի-
կաղի այն կողմը, նրանք, վորոնք
ական էյին գնում սոցիալիզմի դոր-
ծի սակ, նրանք, վորոնք ցանկացան
դավաճանել Խորհրդային Ռեկբայի-
նային: Շատերը խղեցին իրենց անձ-

նազիան կատարելով : Այդ ժամապահանց
 դուք նախադասե՛ք և յի՛ք, սակայն, ընկեր
 ներ, աշխարհսի հարցերում, ուր խոս-
 քը վերաբերվում և հիմնականին,
 մեր հարադատ, ապիստվողմի դար-
 ծին, այնտեղ խնայելու մասին մոռ
 մի խոսք չի կարող լինել, այնտեղ
 անթույլատրելի չե մտրեւ հաշտվարա
 կանուխյուն, այնտեղ պետք է խաչ
 դնես քո բոլոր մտիահարաբերութուն-
 ների վրա և նրանց վրա, ու՛րիւր դա-
 վաճանեցին մեր հայրենիքին, աշխա-
 տութարների հայրենիքին : այդ դատա-
 ճաններին խնայել չի կարելի և չենք
 խնայի (ծափահարուք յումներ) :

Ընկերներ, վերջին ժամանակներս
 ուժեղացել և հետաքրքրութունը
 այն բանի հանդեպ, թե ի՞նչ և կա-
 տարվում ու կրայինական խորհրդա-
 յին դրահանության մեջ, մտրտվհետեմ
 ու կրայինական խորհրդային դրահա-
 նությունը, վերջին տարիների բնթուց
 քում, ստեղծել և մի շարք խաչոք
 դարձեր : Այդ անտակեաից մեր առա
 դրողներն ևլ նրանցից սովորելու բան
 ունեն : Նուս դրողներն սկսում են

ուշադիրութեամբ դիտել, թե ինչ և
 կատարվում աշտեղ, Սորհրդային
 Ուկրայինայում և սա շատ բնական
 է: Մենք պետք է փոխանակենք մեր
 փորձը, առավել ևս, վոր դրականու-
 թյան զարգացումը, նույնիսկ յեթե
 վերջնենք առանձին շոկատները, ա-
 ռանձին բնագավառներում բնթու-
 նում և վոչ միատեսակ: Յեթե, որի-
 նակ, ՌՍՖՍՀ-ում, Մոսկվայում,
 շատ և սվեյի շալ ներկայացված և
 արձակը, ապա աշտեղ, ինչքան յես
 ծանոթ եմ, վերջին ժամանակներս
 սվեյի ուժեղ և, ստենք դրամատուր-
 դիան, և սպա՝ սյուեյիան: Դուք գի-
 տեք, վոր մի շարք դրամատուրդիա-
 կան գործեր ներկայումս հանդես են
 յեկել միութենական հրատարակը, մի
 շարք սվեյներ բեմադրվում են Մասկ
 չայի թատրոններում, Լենինգրադի
 թատրոններում: Յեվ աշտեղ մենք
 տեսնում ենք սհա, թե ինչպես և նոր
 կուլտուրա ստեղծվում: Աշտեղ գը-
 բում են դրաշահը իրենց թեմայի մա-
 ռին, ուկրայինական նյութի մասին:
 Նրանց հետ և Ուկրայինայի կուլտու-
 րան, նրանց ևս և Ուկրայինայի աշ

խառաւոր մասնաճիւղի պայքարի փոշ-
ձք, նրանք դրում են ուկրալինական
լեզվով, այնուամենայնիւ նրանց մի
շարք արտադրութեանները ստանում
են համամիութենական նշանակու-
թեան, վարովհետեւ այն, ինչի մա-
սին այստեղ իր լեզվով խոսում է
դրողը, սա հարազատ դործ է և և ընդ-
հանար և մեզ բնութիւն համար :

Ընկերներ, մենք այստեղ արդեն խո-
սեցինք այն սրիկաների մասին, վո-
րոնք ներկայումս բեմադրվում են
Մյասկովայում և Էլենինգրադում . դրանք
են բնկ . բնկ . Միկիտենկոյի, Կորնեյ-
չուկի, Կռչերգի սրիկաները : Պետք է
ձեզ ասեմ, վոր վերջին ժամանակ-
ներս դրողների համամիութենական
համագումարի առթիւ հրատարակ-
վում են ուկրալինական արձակագիր
ների մի շարք դործերը : Թարգման-
ված են բնկ . բնկ . Պանչայի, Կուդ-
միչի, Կուպիլենկոյի դործերը : Չափա-
զանց ուժեղ կերպով թարգմանական
դրականութեան մեջ հանդես է յե-
կել ուկրալինական սրեղիան : Սա-
կայն սա միայն սկիզբն է : Դուք,
հավանաբար լսեցիք Ուկրալինական

Կազմ կամ իսկ չի հանձնաժողովի աշխատանքների մասին, վերջ և հենց նրանով պետք և դատվի, վերապետը Մասկվայի դրոշները կարդան ու կրայինական դրոշները դարձեցը, Առաջալինայի դրոշները կարդան Մասկվայի դրոշների դարձեցը, լորպետի նրանք իբար հետ ծանոթանան, լավագույն յերկերի հետ փոխադարձ ծանոթացման կարգով:

Այստեղ յես ձեզ պետք և առեմ, վար վերջին ժամանակներս մեզ մտցեղան դրոշների բավական շատ հանդիպումներ, վարի մասին ժամանակին դեպ Ա. Մ. Գորկին: Յերբ վար հարցրին դրոշ նիշիցին, թե նա ադգյաք ճանաչում և դրոշ Պիտեր Այլանմբերգին նա պատասխանեց. «Կարծես թե յես այդ դրոշի հետ ճանչել եմ մի անգամ»: Յեթե խոսեմք մեր դրոշների և ուկրայինական դրոշների ծանոթութեան մասին, դժբախտաբար, մինչևի՛ստ, նա հաճախ հատարում և հաշկերույթի կարգով թե Մասկվայում և թե այստեղ, սակայն միմյանց դրվածքները զիչ են կարդում: Պրապերի Միութեանը

Վերապէս ստեղծադարձական կալեկ-
 տիւմ, ըստ արժանաւորւմն, կրարձրա-
 նառ միմիայն աչն ժամանակ, յերբ
 գրողներն ծանոթությունը կլինի վոչ
 միայն հանդիսավոր հանդիպումներն
 կարգով, այլ կլինի հիմնական ծանո-
 րություն նրանց դրական դարձերն
 հետ, նրանց արտադրություններն
 փախադարձ ստուգման և փոխադարձ
 քննադատության հետ: Յետ ձեզ պետք
 և սուսմ, վոր աչ սեստակետից ուկ-
 րայիական հանձնաժողովի աշխա-
 տանքը դեռևս չի վերջացել: Մեզ
 մտա յեղով հանդիսավոր կարգով մի
 հանդիպում ևս, ուր աւերայիական
 գրողները հանդես յեկան կամ. սեղադե
 միայնում: Յեղան նաև ժողովներ,
 ուր ընկ ընկ Գլադկովը և Բեդիմենրս-
 կին զեկուցումներ կարդացին աւերա-
 յիական գրողներն ստեղծադարձու-
 թյուններն մասին. աչդ աշխատանքը
 պետք և շարունակել: Մինչևի համա-
 միութենական համադումարը և հե-
 տադայում մենք պիտի կազմակեր-
 պենք նման փախադարձ մի շարք յե-
 րեկույթներ, ուր Մասկովայի մեր դը-
 րողները պետք և քննադատեն աւերա-

յինական գրողներին, իսկ ուկրայինա-
 կան գրողները քննադատեն Մոսկվա-
 յի գրողներին: Յես կարծում եմ,
 վոր այսպիսի բնույթի ստեղծագոր-
 ծական հանդիպումները բացի լավից
 ուրիշ վնջինչ չեն տա և այս գործը
 պետք և ամեն կերպ վողջունել և
 դարդացնել:

Ընկերներ, այստեղ բաղձաթիվ ըն-
 կերների մեջ դարձացական հարց ծա-
 դեց, թե ինչո՞ւ այսպես յերկար և
 նախապատրաստվում գրողների հա-
 մամիութենական համագումարը: Յեն
 թաղրվում եր համագումարը բաց ա-
 նել գեռես անցյալ տարվա աշնանը,
 սակայն համագումարի բացումը նշա-
 նակված և այս տարվա ադաստոսի
 15-ին: Ետտերը հարց են տալիս, թե
 մի՞թե սա արդեն բավական լուրջ
 նախապատրաստություն չե: Ինչո՞ւմն
 և բանը, ինչո՞ւ յե հետաձգվում
 համագումարը: Վորովհետև վ գրող-
 ների համամիութենական առաջին
 համագումարը չի կարելի գիտել վոր
 պես հերթական հանդես, կամ վոր-
 պես հերթական մի կոնֆերենցիա,
 կամ պարզապես վորպես գրողների

«զարահանդես—արլեյ», ուր պետք է
 հանդես դան մեկը մյուսի յետևից
 մեր Միության արիքունի վրա՝
 Մոսկվայում, և խոսեն իրենց ստեղ-
 ծաղործական դեկլարացիաների մա-
 սին: Բանը, ընկերներ, սրանում չէ:
 Բանն այն է, զոր խորհրդային գրա-
 հոսնությունը համադրումարի շեմքը
 թեևսիտխելով, պետք է այլ կերպ դառ-
 նա: Բանն այն է, յորպեսզի յուրա-
 բանչյուր գրող, դնալով գրողների
 համադրումարից պարզ ու խորը համո-
 զում քնենա այն մասին, թե ինչպես
 պիտի աշխատի, ինչպես պիտի գրի,
 ինչպիսի՞ մեթոդներ պետք է նա կի-
 րասի իր ստեղծաղործության մեջ:

Մեր գրողների միությունը ստեղ-
 ծաղործական կազմակերպություն է,
 նա այժմ պետք է դնի հատկապես
 ստեղծաղործական կարգի հարցեր,
 ինչպես պետք է աշխատի գրողը, ին-
 չի վրա պիտի աշխատի, — սրանք
 շատ խոշոր հարցեր են: Յեւ, ընկեր-
 ներ, այս հարցերը կենսական հար-
 ցեր են գրողի համար: Առաջ, նախ-
 բան հեղափոխությունը, այս հարցե-
 րը վճռում ենին պարզ կերպով. — դը

բողբ թողնուած եր ինքն իրեն, նա
ձիայնասեղ եր, նա դիմանում եր մրցու
թյանը, նա սախարված եր ինքը հար-
թել իր ճանապարհը: Բազմաթիվ աստ
զանգներ խորտակվեցին, և մենք գի-
տենք նման բազմաթիվ խորտակ-
ված աստղանդներ, բազմաթիվ մար-
դիկ կոտորել են իրենց մեջքը, ծառա
յության են դնացել շահադործողնե-
րի՝ տիրապետող դասակարգի մաս:
Յե՛վ միմիայն ամենից ուժեղներին եր
հաջողութեամբ ճանապարհ հարթել ի-
րենց համար և նվաճել իրենց սեզր:
Իս մեր ճանապարհը չե:

Մենք մողջ կշանքը կազմակերպում
ենք նոր ձևով: Յե՛վ գրողներին կազ-
մակերպության խնդիրը կայանում է
հինց նրանում, մարտնչայի ոգնի յե-
րթնառարդ գրողներին դարձապատմելը,
նրանց կատարելագործմանը, աշխի
նրանց տիրապետել գրելու ձիրքին ու
մարտնչաությանը, հատկապես ստեղ
ծողործական ստուգման կարգով, մո-
խադարձ ընկերական քննադատու-
թյան կարգով, շահակցելով մարտնչայի
աշխ ձևով աստղծովի լատ հնարավորին,
ուսիելի բարեմարտատ սրտմաննեք՝ մեր

Խորհրդային դրահանութեան դար-
 ասացման համար: Սրանուամեն և ահա
 դարձը: Իրա համար եւ դրողների
 համադրումարի անշուքիամբ այսպես
 ժանրամասն են մշակելում բոլոր հար-
 ցերը, և այս ժամանակամիջոցում
 շատ բան և արված: Այս ժամանակա-
 մեթոսքում վճարված և վաչ թե հաս-
 բակ, այլ խոչարագույն քաղաքական
 հարց՝ այն մասին, թե ո՞վ պետք և
 ժանի դրողների միութեան մեջ: Այս
 շնորհիվ կատարված աշխատանքի,
 մենք տեսնում ենք, զոր միութեանն
 արդեն ստեղծված և, զոր այս տարի-
 ների ընթացքում դրողները ծանոթա-
 ցան իրար հետ, իմացան, թե ում
 պետք և բնդունել, ում չպետք և բն-
 դունել, զորոյհետև չեմ զոր կարող են
 լինել, և իբրև շատ են յեղել ու-
 մեն տեսակի կեղծ դրողներ, զո-
 բանք ցանկացել են ուժեղացուց-
 մաստմա, զորպեսզի ամեն տեսակի ա-
 վանաներ ստանան, զորպեսզի շորթե-
 լով դրողին: Այդ մարդիկ վարկա-
 բեկում ելին դրողների կազմակերպու-
 թեանը. մենք կարողացանք նրանց հե-
 ռացնել, նրանցից ազատել: Այս

այժմ Լենինդրադում, Մոսկվայում և
այստեղ, Ուկրալինայում բնդունելու
թյուները գրողների միության մեջ հա-
մեմատարար սահուն անցալ, վարով
հետև գրան նախորդեց նախասպտո-
րաստական մեծ աշխատանք:

Վերցրեք դուք այնպիսի գործ, ինչ
պիտին և առանձին հանրապետու-
թյունների գրողների ստեղծագործու-
թյան ուսումնասիրութունը: Չն^ո
մոր այդ բանն առաջ մեզ մոտ գոյու-
թյուն չուներ: Սոսում էլին ուկրալի-
նական գրականության մասին, բելո-
ուսական գրականության մասին,
սակայն չէլին պատկերացնում ի-
րենց, թե կոնկրետ կերպով ինչն^ումն
և սրտահայտում այդ ուկրալինական
գրականությունը, բելոուսական գր-
ականությունը, վրացական գրակա-
նությունը և այլն: Ա. Մ. Գորկու
նախաձեռնությամբ գրողների միու-
թենական կազմակերպուն ստեղծեց
հաստատվ համեմատողով, վորը անց-
կացրեց այս աշխատանքը՝ մեր սղղա-
լին հանրապետությունների ստեղծա-
գործությունների հետ ծանոթանալու

ուղղութեամբ: Այս աշխատանքը դեռ
ևս չի ավարտուիլ, սակայն, համե-
նայն դեպս և այս տեսակետից ար-
դեն շատ բան և արված՝ պարզելու
տուանձին հանրապետութեան ներքի
սակզմադարձական կադրերը, պարզե-
լու համեմատական յերկերը և դրական-
աղղութեան ներքը: Այս աշխատանքը
ևս, նույնպէս, խոշոր աշխատանք և:

Գրողների միութեան կանոնադրու-
թեանը, սոցիալիստական, սեպտեմ-
բեր հարցերը, պոստիւմի, դրամայի,
արձակի հարցերը, այս բոլորը քն-
նարկված են սակզմադարձական խոր-
հրդակցութեան ներքում, վորոնք վեր-
ջին ժամանակներս տեղի ունեցան
Մոսկւայում և Սարկովում: Յեզ, ըն-
կերներ, յեթե խոսենք այն մասին,
թե ինչ նշանաբանի տակ և անցնում
մեր համադրումարի աշխատանքը,
մենք տեսնում ենք, վոր առաջին՝ այս
սակ իր հաստատումն տեղն և դրավիլ
ինքնաքննադատութեանը, վորք բա-
գական աշխուժ արձագանք և տառջ
բերել թե դահլիճում և թե նախագա

հաւթ յանձնեմք . ինքնաբնականապէս
թ յանձնը են հանդէս գալիս թե գեղեց-
ցողները և թե մտքերի յոխանակու-
թ յանձնը մասնակցողները : Սա լամբ
գործ և : Յերկրորդ հարցը , գա ար-
տադրութ յանձնի գորակի հարցն և : Այս
հարցը ներկայացումս հիմնական հար-
ցերից մեկն և :

Մեզանում շատ բնկերներ գտնում
են , զոր գրականութ յանձնը գա միայն
տաղանդի գործ և , զոր բաւական և
տաղանդ ունենալ և արդեն ամեն ինչ
ապահովված և : Գծբախտաբար , այս
տեսակի հարցքներ պատահում են և
ներկայումս : Ի հարկե , գրականութ
յանձնը տաղանդի գործ և և սոսանց
տաղանդի չի կարող լամբ գրող լինել :
Սակայն , բնկերներ , պատկերացրեք
մեզ տաղանդ զխառութ յանձնեմք , սեխ-
նիկայի մեջ , տաղանդ , զոր գլխոված
չլինեք շարժարտաչն մարթեմատիկայի
զխառութ յանձնը , Փիղիկայի , Քիմիայի և
մի շարք այլ զխառութ յանձներով : Հնա
բաւժ՞ր և արդ յոք նման տաղանդ
ներկայումս ճշգրտա զխառութ յանձների
բնադարձաւում : Անհնար և այդ , գա
անվիճաւար և , և մենք շատ լամբ գլ-

աննք աչդ և հասկանում ենք: Սա-
 կայն, յերբ խոսքը գրականութեան և
 վերաբերում, մենք մինչև այժմ ևլ
 դեռևս հանդիպում ենք այնպիսի կար-
 ծիքի, թե բավական և տաղանդ ու-
 նենալ, բաշխական և ունենալ վորոշ
 շախմատ ֆանտաստիա և յերեվակայա-
 թշուև և գուր արդևն սրտորատի գր-
 բող ևք: Վարելի յե նստել և գրել ու-
 մրել: Սա հսկայական սխալ և: Գրծ-
 բախատարար, այս հայացքը: Գոյու-
 թշուև ունի մինչև այժմ, նրա դեմ
 համառորեն սրայքարեց Ս. Մ. Գոր-
 կին, վորն այս թեմայի շուրջը շատ
 սուր մի շարք հողվածներ գրեց: Յեվ
 սա բալորովին ճիշտ և: Աչդ տեսակի
 յերխոտասարդ գրողները հիշեցնում են
 մի քանի տաղանդավոր ինքնուսների:
 Ինձ սոփիթ և յեղել լսելու այն մա-
 սին, վոր Սերիբի թնչ-վոր խուլ ան-
 հշոււնում գտնվել և այնպիսի ինքնուս-
 տաղանդ, վորը հնարել և ժամացույ-
 ղի մեխանիզմ՝ առանց յերբեք ժամա-
 ցույց տեսնելու: Ի հարկե, սա տա-
 զանդավոր մարդ և: Կամ պատմում
 են մի տաղանդի մասին, վորը չիմա-
 նարով նորից գտել և վերլուծական

յերկրաչափությունը :

Այս յերկու դեպքերն եւ առաջ եւ ընդ
բում ե' ժպխտ ե' վիշտ : Այս յերե-
վույթները վկայում են ուժերի ան-
լորդ ծախսման մասին, և ընդդժում
են անկուլտուրականության վտանգը :

Յեւ յեթե խոսենք դրողների մա-
սին, այն ժամանակ մեզ հարկա-
վոր չեն այնպիսի դրողներ, վարոնք
պետք և նորից հնարեն ժամացույցի
մեխանիզմը : Մենք, իհարկե, կարող
ենք հենվելով յեղածի վրա սպասել
մի շարք ստորանդալոր պատմվածքնե-
րի : Բայց մի՞թե այս ստղանդալոր
պատմվածքներն առաջ են մղում դրա-
կանությունը : Յեւ մի՞թե բանն ոչն
և, վոր մարդիկ կդրեն ևս 2-3 ստղան
դալոր պատմվածքներ : Դրա մեջ
չե խորհրդային դրականության նը-
շանակությունը : Տաղանդի դործը
ինչ վոր նոր բան ստեղծելու մեջ և
կոչանում, ստղանդի դործն և առաջ
շարժվել, առաջ դնալ՝ հենվելով ար-
դեն նախաձեռն կուլտուրայի վրա : Ա-
հա թե ինչուսն և բանը : Յեւ դրա
համար եւ կուլտուրայի դժով, դրող-
ներին նախապատրաստելու դժով, նը

րան վարակատու թշամբ գինելու դժուր,
 աչդ բոյսը հարցերի ծանոթությամբ,
 — սա հարկավոր է այժմ ընդդէմ գը
 բողների համամիութենական համա-
 դամարից ստաջ, — մենք պետք է ող-
 նենք մեր գրողներին, վորովհետե
 նրանց մէջ կան շատ յերիտաստրդ-
 ներ, բայց մեծիւ աշնալիսի մարդիկ,
 վորոնք չեն պատկերացնում գրողի
 վարակատու թշան վողջ բարդությունը,
 վորոնք մտածում են, թե դա հասա-
 բանի րան է :

Մեր գործն է սպնել նրանց ուղղ-
 լու իրենց սխալները, քննադատել նը
 րանց, յերբեմն խիստ քննադատել, յե
 թե նրանք պործենում են, վոր կարն
 լի յե շատապով, վորաքի վրա լսով յեր-
 կեր ստեղծել :

Այստեղ, այսպէս հանդես յեկաւ
 ընկ. Կրուչնիցկին և խոսեց այն մտ
 սին, թե ինչպէս իրեն պէս մի մար-
 դու, վոր ասաջին անգամ ընկնելով
 Խորհրդային Միութեան մէջ, ինչպէս
 ինքն է ասում, շշմեցրել է զտումը,
 թե ինչպէս անցել է աչդ դատումը գե-
 կուցումներով : Սա, ընկ. Կրուչնից
 կի, գտում չէ, սա ինքնաքննադատու

Թշաւն և, առանց վորի մենք ապրելը
 չենք կարող, վորովհետև նա, ով չի
 յննթարկվում ինքնաքննադատութեան
 ով ընդունակ չէ ինքն իրեն քննադա-
 տելու և ում չեն քննադատում, նոս
 փութում և իր արմատի մեջ: Այստեղ
 արդեն վոր մի շարժում չի լինի, վոր-
 ովհետև ստեղծվում և հասած միջոց
 լորտ: Մենք չենք տարւմ այստեղ հո-
 տած միջոցլորտ, մենք ուղում ենք,
 վարդեացի մեղ մտա, խորհրդային գր-
 բարանութեան մեջ, միշտ լինի թարմ,
 առողջ ազ, վարդեացի մեք գրողները
 չնչն վորջ թոքերով և վորդեացի նք-
 րանք ամբանուն և ամբապնդեն մեք
 խորհրդային գրականութեան յերիտա-
 սարգ որդանիղմը:

Ընկերներ, կարեւարագույն հարցե-
 լից մեկը, վարի մասին պետք և խոս-
 վի համարումարում, դա սոցիալիս-
 տական տարիղմի հարցն և: Վերջին
 ժամանակներս սոցիալիստ. տեարիղմի
 հարցի մասին շատ ավելարգ խոսակցու-
 թեաներ են յնդել: Յետ կատելի, վոր
 այստեղ կա յերկու անողենց. կամ ա-
 մեն բնույթ ընդհանուր առմամբ վի-
 լիստիստի, որո. առաջ գլխի աջն մա-

«ին, թե ինչ և սոցիալիստականն ունա
 լիորձը, ամեն տեսակի վերացական
 կարծիքներ և բնութաբաններ վորոնք
 չեն կարգիւնում գրական պրակտիկայի
 հետ, կամ վորոնք են անում սոցիալիս-
 տականն սեպարիւմն ինչ վոր յարլիկնե-
 րով վրակարգինել և կարցնել աշդ յար-
 լիկները ֆրակտիւնի վրա՝ ինչ բախն-
 դակուլթյանը և լինի և վորքան և լ
 նա վաւ հոտ սրճակի:

Յեթե խոսենք գրողների մասին,
 թե աշդ տեսակետից ինչ և պահանջ-
 վում նշանցից, աշդ դեպքում գրա-
 պատասխանը չափադունց պարզ և կոն-
 կրետ կերպով արտահայտված և խաղ
 հըրդարին գրողների միության կանո-
 նադրության մեջ: Աշդ կետը, ինձ
 թվում և, պետք և համարել վրակա-
 հիմնական կետ: Այտանդ հետեյազ
 կերպ և ասվում, — «Սոցիալիստական
 սեպարիւմը հանդիսանում և խորհրդա-
 քին դեղարվեստական գրականության
 և գրական քննադատության հիմնա-
 կան մեթոդը, վորը պահանջում և ար-
 վեստադետից իրականությունը պատ-
 կերացնել ճշդրիտ, պատմականորեն,
 կենդրեա՝ իր հեղափոխական գարգաց-
 ման մեջ»:

Այս նշանակում ե, վոր դրողից ա-
մենից առաջ պահանջվում ե, վորպէս
դի նա տեսնի այդ իրականութեանը :
Գրողից պահանջվում ե, վոր նա տես
նի, թե ուր ե գնում, ուր ե սպրդ-
վում, ուր ե առաջ շարժվում այդ
իրականութեանը, տեսնի նրա հեղա-
փոխական բովանդակութեանը, վո-
րովհետեւ առանց դրան ընդհանրապէս
դժվար ե դրել : Գրողից պահանջվում
ե, վորպէսզի նա ճանաչի այդ իրակա-
նութեանը : Ահա սա այն պահանջն
ե, վոր դրվում ե դրողներին առաջ :

Յերբ դրողներին հետ աննկատ գրու-
ցում ընկ . Մտալինը խոսեց սոցիա-
լիստական սեպիդի վերաբերյալ,
նա հասկապէս ընդլծեց, վոր այս
հարցում անթուշտարելի յե սովեն տե
սակի փիլիսոփայելը :

Մենք չենք պահանջում մարդկան-
ցից, վորպէսզի նրանք պարտադիր
կերպով կիրառեն մատերիալիստա-
կան գիտելիութեան մեթոդը, կամ ե-
լի ինչ վոր խիստ բարդ, գիտական
մեխանիզմներ : Մենք պահանջում
ենք, վորպէսզի դրողը տեսնի մեր ի-
րականութեանը՝ իր հեղափոխական

դարդացման մեջ, տեսնի նրա հիմնա-
 կան տենդենցները, տեսնի թե ինչի
 յն տանում այդ դարդացումը, յերբ
 նա պատկերացնում է այդ իրականու-
 թյունը, անհրաժեշտ է, վարպետի
 նրա յերկր ևս կոչ անի դեպի առաջ,
 վար նա ցույց առ բարրություն ու հնի
 անպատարժյունը, և միաժամանակ
 վարկերի նոր հասարակագրդի հա-
 մար սրայքարելու դործում, վարպե-
